

«Վավերացնում եմ»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

11 հոկտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 սեպտեմբերի 2006 թվականի N 1392-Ն

1119 ՍՆՆՂԱՄԹԵՐՔԻ ՏՎՅԱԼ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳ- ՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՇԱՆԻ ԵՎ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստանդարտացման մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և ելնելով սպառողներին թուրիմացության մեջ զցող գործոնների կանխարգելման, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության ապահովման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել սննդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանի և մականշվածքի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու տարի հետո:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2006 թ. հոկտեմբերի 6
Երևան

Տ Ե Ն Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ՄԱՆՂԱՄՁԵՐՔԻ ՏՎՅԱԼ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՇԱՆԻ ԵՎ ՄԱԿԱՆՇՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են սննդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանին և մականշվածքին ներկայացվող պահանջները:

2. Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում՝

1) գյուղատնտեսական ապրանքների վրա, որոնք նշակման (աճեցման) վայրից դուրս բերվելուց հետո՝

ա) վաճառվում կամ հանձնվում են ժամանակավոր պահեստավորման, նախապատրաստման (վերամշակման) կամ փաթեթավորման կազմակերպություններին (կայաններին),

բ) տեղափոխվում են սննդամթերք արտադրող կազմակերպություններ,

գ) հավաքվում և անմիջապես հանձնվում են արտադրող կամ վերամշակող կազմակերպություններին.

2) վաճառքի կետերում վերջնական սպառողին հանձնված չփաթեթավորված սննդամթերքի վրա, որը փաթեթավորվում է գնորդի պահանջով կամ չափածորարվում է անմիջապես վաճառքից առաջ.

3) այն փաթեթվածքների կամ տարաների վրա, որոնց ամենամեծ կողմի մակերեսը չի գերազանցում 10 սմ².

4) պաղպաղակների կոնկրետ չափաբաժինների վրա: Խմբաքանակի նույնականացման հնարավորություն տվող տեղեկությունը պետք է նշված լինի խմբային տարայի (փոխադրական տարայի) վրա.

5) ներմուծվող սննդամթերքի վրա:

3. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջները պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ սննդամթերքի մականշանը ներկայացվող պահանջների հետ համատեղ:

II. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են հետևյալ հասկացությունները՝

խմբաքանակ՝ նույն նշանակության, միևնույն արտադրողի կողմից գործողության նույն սկզբունքով արտադրված (պատրաստված), նույն բաղադրությամբ և անվտանգությունը բնութագրող նույն սահմանված պահանջներին համապատասխանող սննդամթերքի որոշակի քանակ, որն ուղեկցվում է ապրանքաուղեկից մեկ փաստաթղթով.

փաթեթավորում՝ փաթեթվածքի կիրառմամբ սննդամթերքի նախապատրաստումը փոխադրմանը, պահմանը, իրացմանը և սպառմանը.

փաթեթվածք՝ միջոց կամ միջոցների համալիր, որն ապահովում է արտադրանքի պահպանումը վնասվածքներից և կորուստներից, շրջավայրի աղտոտումից, ինչպես նաև ապահովում է սննդամթերքի շրջանառության (փոխադրման, պահման, իրացման) գործընթացը.

մականշվածք՝ փաթեթվածքի և արտադրանքի վրա նշված տեքստը, պայմանական նշագրերը և պատկերները.

խմբաքանակի նույնականացում՝ ընթացակարգ, որի միջոցով որոշվում է սննդամթերքի պատկանելությունը տվյալ խմբաքանակին.

սպառողական տարա՝ տարա, որն սպառողին է հանձնվում արտադրանքի հետ միասին և որը չի կատարում փոխադրական տարայի գործառույթ.

փոխադրական տարա՝ տարա, որն ինքնուրույն փոխադրական միավոր է.

չափաբաժին՝ փաթեթվածքում չափաժողոված սննդամթերք, որը բնութագրվում է սպառողին հանձնվող յուրաքանչյուր փաթեթվածքի վրա նշված սննդամթերքի անվանական քանակի արժեքով:

III. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

5. Սննդամթերքի խմբաքանակի մականշվածքը պետք է սահմանվի սննդամթերքն արտադրող կամ փաթեթավորող կազմակերպության կողմից՝ պահպանելով սննդամթերքի տվյալ տեսակի մականշվածքին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն տեխնիկական կանոնակարգի 7-րդ կետով սահմանված պահանջները:

6. Սննդամթերքի խմբաքանակի չափը պետք է որոշի տվյալ սննդամթերքն արտադրող կամ փաթեթավորող կազմակերպությունը:

7. Սննդամթերքի տվյալ խմբաքանակի յուրաքանչյուր փաթեթվածքի կամ սպառողական տարայի, կամ սպառողական և փոխադրական տարայի վրա արտադրող կամ փաթեթավորող կազմակերպության կողմից պետք է մականշվի սննդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանը՝ կազմված «L» տառից և խմբաքանակի համարից (օրինակ՝ L 200):

Մինչև 3 ամիս պիտանիության ժամկետ ունեցող սննդամթերքի խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանի և մականշվածքի կիրառումը պարտադիր չէ, եթե սննդամթերքի պիտակի վրա նշված է պիտանիության ժամկետը՝ օրը, ամիսը:

խմբաքանակի համարի կառուցվածքը որոշում է արտադրող կամ փաթեթավորող կազմակերպությունը:

խմբաքանակի համարը պետք է նշվի նաև արտադրող կամ փաթեթավորող կազմակերպության կողմից վարվող համապատասխան գրանցամատյանում:

8. Սննդամթերքի խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանը պետք է լինի երևացող, ընթեռնելի և չջնջվող:

9. Սննդամթերքի խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանը պետք է նշվի նաև տվյալ սննդամթերքի խմբաքանակի ապրանքաուղեկից փաստաթղթում:

IV. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

10. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին սննդամթերքի տվյալ խմբաքանակի նույնականացման համար օգտագործվող նշանի և մականշվածքի համապատասխանության պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան